ԿՐՈՆԱԳԻՏԱԿԱՆ

Տ. ՀԱՅՐԻԿ ԱՐԵՂԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՍՊԻՐԻՏԻԶՄԸ ԵՒ ՍՈՒՐԲ ԳԻՐՔԸ

Ժամանակակից կրոնական շարժումների մեջ որոշ ուղղություններ ունեն հազարամյակների նախապատմություն եւ գրեթե միշտ ուղեկցել են քաղաքակրթությանը՝ Հին Հռոմից ու Հունաստանից մինչեւ Պաղեստինյան կամ սուրբգրային նահապետական ու թագավորաց ժամանակները: Դրանց թվին է պատկանում օկուլտիզմն[1] իր բազմաթիվ տեսակներով, որոնցից մեկն էլ սպիրիտիզմն է կամ ոգեկանչությունը, հոգեպաշտությունը:

Օկուլտիզմ եզրը կրոնագիտության մեջ ներմուծվել է XV դ. սկսած, երբ երեւան եկան օկուլտ-փիլիսոփայության՝ հերմետիզմին նվիրված բազմաթիվ աշխատություններ[2]:

Ժամանակակից օկուլտիզմը ձեւավորվել է XIX դարի կեսերին եւ իր էությամբ շարունակությունն է համարվում կամ կրկնում է առաքելական ժամանակների գնոստիկներին, միջնադարյան հրեական Կաբալային, ընդօրինակում է հինդուիզմի որոշ սկզբունքներ եւ շամանիզմի պրակտիկան: Քրիստոնեական վարդապետությունն օկուլտիզմի էզոթերիկ ուղին, որպես ճանաչողության ճանապարհ, միանշանակ ժխտում է: Համաձայն սուրբգրային ընկալումների՝ դա չար ուժերի ու խավարի զորությունների ճանապարհն է, ինչպես ասում է Պողոս Առաքյալը[3]:

Սույն հոդվածի սահմաններում կփորձենք ներկայացնել Այենդորյան վհուկի պատմությունը, նրա մասին արտահայտված զանազան կարծիքներ՝ ցույց տալու համար, որ Սուրբ Գիրքը միանշանակ մերժում է նման «տեխնոլոգիաները»:

1. ԱՅԵՆԴՈՐՅԱՆ ՎՀՈՒԿԸ ԵՒ ՍՊԻՐԻՏԻԶՄԸ

«Սավուղը մեռավ իր այն անօրինությունների պատճառով, որ գործել էր Տիրոջ դեմ: Տիրոջ խոսքը չպահելով՝ վհուկներից խորհուրդ էր հարցրել, փոխանակ Տիրոջը խնդրելու: Նրան դեմ էր կանգնել Սամուել մարգարեն: Տերը սպանել էր նրան եւ թագավորությունը վերադարձրել Հեսսեի որդի Դավթին» (Ա Մնաց. Ժ 13-14):

Շատ հարցուկներ փորձում են Սուրբ Գրքով հիմնավորել ոգեկանչության երեւույթի վավերականությունը: Դրանում նրանք ունեն բավականին լուրջ փաստարկներ: Խնդիրն այն է, որ արեւմտյան շատ քրիստոնյա եկեղեցիների պաշտոնյաներ սպիրիտիզմի ջատագովներ են եղել, եւ այդ փաստը հաճախ է շահարկվում սպիրիտիստների կողմից[4]:

---

1 Occultus - լատ. գաղտնի, թաքնված: Հաճախ օգտագործվում է էզոթերիկ իմաստով եւ նշանակում է միայն ընտրյալներին մատչելի: Այս իմաստով occultus նշանակում է թաքնված շատերի համար, բայց բացահայտ ընտրյալների համար (Религиоведение, **И. Н. Яблоков**, М.1998, էջ 432):

2 Տե՛ս օրինակ Յա. Բյոմի (1575-1624), Սվեդենբորգի (1688-1772) աշխատությունները:

3 Նմմր. Եփես. Զ 12:

4 1960 թ. Անգլիկան Եկեղեցու եպիսկոպոս Ջեյմս Պայկը spirit-seance-ում կապ է հաստատում իր մահացած

Ընդհանուր առմամբ սպիրիտիստները հավատում են մեր Տիրոջը՝ Հիսուս Քրիստոսին՝ ընդունելով նրան որպես փրկիչներից մեկը, որոնք տարբեր ժամանակաշրջաններում աշխարհ են գալիս՝ լուսավորելու եւ մարդկանց ցույց տալու Կյանքի ճանապարհը: Ըստ նրանց՝ Հիսուս Քրիստոս բոլոր ժամանակների մեծագույն հարցուկ սպիրիտիստն էր, նա խոսել էր մահացածների հոգիների հետ (*Տալիթա կումի*), հրամայել էր ոգիներին եւ նրանց հետ կոնտակտի մեջ մտել (Լեգեոնի պատմությունը):

Սպիրիտիզմն ունի իր լեզուն: «Հոգին» կազմում է մարդու հիմնական բաղադրիչը: Մահվանից հետո հոգին շարունակում է ապրել: Հոգեւոր աշխարհը հոգիների մի առանձին աշխարհ է: Մեդիումը կամ հարցուկն այն մարդն է, որն արտակարգ զգայուն է հոգեւոր աշխարհից եկող «հաղորդումների» նկատմամբ եւ դառնում է միջնորդ այս եւ անդրաշխարհի միջեւ:

Տեղեկությունները հաղորդվում են մեդիումին, որն էլ իր հերթին այդ ամենը հայտնում է «սեանսի» մասնակիցներին:

«Տելեպատիան» (հեռամտաընկալում) մտքերի փոխանցումն է կամ ընկալումը, բայց ոչ ֆիզիկական՝ տեսանելի միջոցներով, այլ մեզ անհայտ ճանապարհով, այսինքն՝ ոգիների:

«Դայծառատեսությունը», «պայծառալսողությունը» ներքին ձայնի միջոցով լսելու յուրահատուկ հատկություն է, որի միջոցով մեդիումն իբր թե կարողանում է ապագան տեսնել կամ ձայնային երեւույթի միջոցով լսածը գրն առնել:

«Լեվիտացիան» մի երեւույթ է, երբ ոչ թե ֆիզիկական, այլ թաքնված, ներքին ուժի միջոցով բարձրացվում եւ տեղաշարժվում են տարբեր նյութական իրեր:

«Մատերիալիզացիան» (նյութականացում) այն է, երբ հոգին հայտնվում է նյութական աշխարհում՝ ցույց տալով իր առկայությունը ինչ-ինչ առարկաների շարժմամբ կամ ձայնային երեւույթով:

«Ապորտ (Aport)»ը մեկը մյուսի միջով անցնելու հատկությունն է, որոնք իրականանում են առանց արտաքին ֆիզիկական ներուժի ազդեցության:

Սպիրիտիզմի սեանսները 1848 թ. Ֆոքս քույրերի ֆենոմենից հետո շատ արագ տարածվեցին: Շուտով բոլորին հայտնի դարձան նաեւ այն տարօրինակ իրադարձությունները, որոնք կատարվում էին Ֆոքսերի հետ:

Հոգիների հետ շփման մեջ մտնելուն հաջորդեցին նաեւ սեղանաշարժումները: Զարմանալին այն է, որ սեղանաշարժումային տեխնոլոգիաները XIX-XX դարերում լայն տարածում գտան հիմնականում բարձր խավի շրջանակներում: Թվում է, թե դա անվնաս զբաղմունք է, բայց միանշանակ է, որ այդ անվնաս համարվող զբաղմունքներն այնքան էլ անվնաս չեն: «Սավուղի ճանապարհը» դրա լավագույն ապացույցն է:

Բնականաբար, այս նոր պաշտամունքի զարգացումը լուրջ վտանգ էր Եկեղեցու համար, քանի որ սպիրիտիստների կամ դրանց ջատագովների մեծ մասը քրիստոնեական եկեղեցիների անդամներ էին, նույնիսկ հոգեւորականներ: Բնականաբար, Եվրոպայում այդ շարժումը համարվեց սեւ մոգություն եւ չար ուժերի հետ շփման դրսեւորում: Մտավախութ-

---

որդու հոգու հետ: Նրա որդին դրանից քիչ առաջ ինքնասպան էր եղել: Եպիսկոպոսը իր հարցուկի՝ ոմն Արթուր Ֆորդի միջոցով պարբերաբար «հաղորդումներ» էր ստանում որդուց: (Տե՛ս **J. Pike with D Kennedy**, An account of my experiences with Physic Phenomena, NY, 1968, էջ 246-247):

յուն կար, որ այդ նոր պաշտամունքը անգամ կփոխարինի քրիստոնեական հայրենությանը, եւ եկեղեցիները կդատարկվեն[5]:

Սպիրիտիստները մեր օրերում ջանում են ապացուցել, որ այս երեւույթը հոգու անմահության հավատքի պաշտպանն ու ջատագովն է[6]: Բարեբախտաբար դա միայն խոսք է եւ ոչ ավելին, հիմնավոր ու համոզիչ փաստարկներ գոյություն չունեն: Այդ ենթադրական տեսակետը հիմնված է գաղտնի, արտասովոր, կասկածելի, անհասկանալի երեւույթների վրա, որոնց վերաբերյալ գիտությունն իր վերջին խոսքը դեռ չի ասել:

2. ԱՂՔԱՏ ՂԱԶԱՐՈՍԻ ԱՌԱԿԸ

«Մի մեծահարուստ մարդ կար, որ բեհեզ ու ծիրանի էր հագնում եւ ամեն օր առատապես ուրախություն էր անում: Եւ Ղազարոս անունով մի աղքատ մարդ ընկած էր նրա դռան առաջ՝ վերքերով ծածկված: Եւ ցանկանում էր լցնել իր որովայնը այն փշրանքներով, որոնք թափվում էին մեծահարուստի սեղանից: Եվ դեռ շներն էլ գալիս էին ու լիզում նրա վերքերը: Երբ աղքատը մեռավ, հրեշտակները նրան տարան Աբրահամի գոգը. մեծահարուստն էլ մեռավ եւ թաղվեց: Եւ դժոխքում, մինչ սա տանջանքների մեջ էր, բարձրացրեց իր աչքերը, հեռվից տեսավ Աբրահամին եւ Ղազարոսին էլ՝ նրա գրկում հանգստացած: Եւ նա աղաղակեց ու ասաց. «Հա՛յր Աբրահամ, ողորմի՛ր ինձ եւ ուղարկի՛ր Ղազարոսին, որ իր մատի ծայրը թրջի ջրով եւ զովացնի լեզուս, որովհետեւ այս տապից պապակում եմ»: Եւ Աբրահամը նրան ասաց. «Որդյա՛կ, հիշի՛ր, որ դու ստացար քո բարիքները այնտեղ, քո կյանքի ընթացքում, իսկ Ղազարոսն էլ՝ չարչարանքները. այժմ սա այստեղ մխիթարվում է, իսկ դու այդտեղ պապակում ես: Եւ այս բոլորից բացի, մեծ վիհ կա մեր եւ ձեր միջեւ. եթե ուզենան այստեղից ձեզ մոտ անցնել, չեն կարողանա. ոչ էլ այդտեղից մեկը կարող է մեզ մոտ անցնել»: Մեծահարուստն ասաց. «Արդ, աղաչում եմ քեզ, հա՛յր, որ Ղազարոսին ուղարկես իմ հոր տունը, որտեղ ես հինգ եղբայրներ ունեմ, որպեսզի նրանց վկայություն տա, որ նրանք չգան տանջանքների այս վայրը»: Եւ Աբրահամն ասաց. «Նրանք ունեն Մովսես եւ մարգարեներ, թող նրա՛նց լսեն»: Եւ նա ասաց. «Ո՛չ, հա՛յր Աբրահամ. բայց եթե մեռելներից մեկը նրանց մոտ գնա, նրանք կապաշխարեն»: Եւ Աբրահամը նրան ասաց. «Եթե Մովսեսին եւ մարգարեներին չեն լսում, մեռելներից մեկն էլ եթե հարություն առնի, չպիտի համոզվեն» (Ղուկ. ԺԶ 19-31):

Առակը երկու դասի մարդկանց է ներկայացնում՝ մեծահարուստ եւ աղքատ[7]: Մեկն անիսիղճ, դաժան հարուստ մարդ էր, վայելում էր կյանքի բոլոր բարիքները, բոլորովին չէր մտածում ուրիշների մասին. նա ուտում, խմում, քեֆ էր անում՝ համոզված, որ հենց դա է ողջ կյանքի իմաստը:

Նրա աչքի առջեւ ապրում էր մի խեղճ աղքատ, որ ապաստան էր գտել շների կողքին:

5 Հռոմի Կաթոլիկ Եկեղեցին 1898 թ. դատապարտեց սպիրիտիզմը, բայց եւ թույլատրվեց օրինական ձեւով կատարել այդ երեւույթի հետազոտումները: (Larousse, 1971, համապատասխան հոդվածը՝ էջ 1142-1150):

6 **О. Дубровская**, Тайны спиритизма, М, 2002, գլ. 6:

7 Առակի՝ որպես սպիրիտիզմի իրական լինելու ապացույցը կարելի է հերքել հենց բուն առակի բովանդակությունից եւ նպատակից: Տե՛ս **Գրիգոր Տաթեւացի**, Գիրք քարոզութեան, Ամարան հատոր, 1731, էջ 425-428, նաեւ Толковая Библия, հ. 3, С-Пбг. 1913, էջ 232-233: Ստորեւ կներկայացնենք այդ առակի պատմությունը սպիրիտիստական մեկնությունները բացասելու դիրքից: Տե՛ս նաեւ **Тихомиров**, Загробная жизнь, М., 1991, էջ 102-105:

Վերջապես փրկարար մահը վերջ տվեց նրա տառապանքներին: Անհոգ ապրող հարուստն էլ չխուսափեց մահից: Նրան չփրկեց հարստությունը: Հավանաբար մեծահարուստի համար նրա եղբայրները շատ ճոխ թաղում կազմակերպեցին: Չնայած դրան՝ անդրաշխարհում չափանիշերն այլ դուրս եկան: Աղքատն Աբրահամի գրկում երանության մեջ հայտնվեց, իսկ հարուստը դժոխքում՝ տառապանքների մեջ: Որքան երջանիկ էր հարուստը երկրային կյանքում, հազարապատիկ դժբախտ էր մահվանից հետո: Նա նախ Ղազարոսին էր նայում, ապա Աբրահամին եւ վերջինիս խնդրում, որ աղքատի միջոցով թեթեւացնի իր տառապանքները: Սակայն դժբախտ մեծահարուստի խնդրանքը մնում է անկատար: Նրա եւ Ղազարոսի միջեւ կար հսկայական անդունդ՝ բարու եւ չարի, լույսի եւ խավարի, որոնք չունեին շփման եզրեր:

Մերժում ստանալով՝ նա աղերսեց Աբրահամին փրկել հինգ եղբայրներին, որոնք դեռ կենդանի էին: Նրա այս խնդրանքում թաքնված դժգոհություն կար: Նա նաեւ խորհում էր, որ ինքը գուցեեւ սխալ է եղել, որի համար արժանացել է նման դաժան ճակատագրի, քանի որ նախապես զգուշացված չի եղել եւ հնարավորություն չուներ այլեւս խուսափել դժոխքից: Նա խնդրում է Աբրահամին. «Ես ունեմ հինգ եղբայրներ, ուղարկիր Ղազարոսին նրանց մոտ, թող պատմի, թե ինչպիսի գրկանքների կարժանանան, եթե երկրում այդպիսի կյանք վարեն: Այն աշխարհից եկող մարդուն նրանք կհավատան եւ կփոխեն իրենց ապրելակերպը»:

Բայց Աբրահամը մերժում է մեծահարուստի խնդրանքը: Ճիշտ է, այդ խնդրանքը բավականին հիմնավոր էր, լի կարեկցանքով այն մարդկանց հանդեպ, ովքեր անգիտության հետեւանքով տառապում են աշխարհում: Եվ Աբրահամն ասում է. «Նրանք կյանքում հավատարիմ, վստահելի ղեկավարներ ունեն եւ դեպի երկինք ճանապարհ ցույց տվողներ՝ Մովսեսն ու մարգարեները, թող նրանց լսեն եւ մահվանից հետո կխուսափեն այս դժոխքից»[8]:

Սակայն հարուստը գտնում է, որ եղբայրների համար այդ ուղեցույցը բավարար չէ: Բնական է մտածել, որ նա՝ մեծահարուստը, ավելի լավ է ճանաչում իր եղբայրներին, քան Աբրահամը: Նրանք չեն լսի ո՛չ Մովսեսին, ո՛չ մարգարեներին: Նրանք խուլ են նույնիսկ Աստվածաշնչի հանդեպ: Իսկ եթե կատարվեր մի անսովոր իրադարձություն, այն աշխարհից մեկը գար եւ պատմեր, այդ դեպքում կհավատային, կփոխեին իրենց կյանքը եւ կփրկվեին այս տառապանքից, ինչը չկարողացավ անել ինքը՝ չիմանալով անդրաշխարհի իրական լինելու մասին:

Սակայն հավատքի հայրը՝ Աբրահամը, չի համոզվում մեծատան բերած փաստարկներից եւ իր վերջնական վճիռն է արձակում.

«Դու ասում ես, որ նրանք կզղջա՞ն, եթե մեռած հոգի գա: Ո՛չ, ես համոզված եմ, որ եթե նրանք չեն ընդունում Մովսեսի ցույց տված կյանքի ճանապարհը, ապա չեն կամենա հավատալ վերակենդանացած հանգուցյալին հանդիպելու դեպքում»:

Հարուստը հավանաբար գիտակցում է Աբրահամի պատասխանի հիմնավոր ու ճշմարտացի լինելը եւ ստիպված լռում է: Այսպիսին է առակը մեծահարուստի եւ աղքատ Ղազարոսի մասին, որը հանդերձյալ կյանքի մասին պատկերացումներ հայտնում է որոշակի եւ սպիրիտիզմի վերաբերյալ որոշակի ելակետային ուղղություն կարող է ցույց տալ:

Փորձենք նայել առակին մեծահարուստի եւ մեր օրերի սպիրիտիստների աչքերով:

8 Հմմտ. Ղուկ. ԺՁ 29:

Արդյո՞ք մեր հարազատների գալուստն այն աշխարհից անհետեւանք կմնա մեզ համար, չի արթնացնի մեզ սին կյանքից ու մտքերից, չի ունենա որոշիչ, բարերար ազդեցություն մեր հետագա ողջ կյանքի վրա: Իսկ ի՞նչ ասել անհավատների մասին, այսինքն՝ նրանց, որ չեն հավատում հանդերձյալ կյանքի գոյությանն ընդհանրապես: Եթե իրոք գոյություն ունի հանդերձյալ կյանք (իսկ դա անկասկած է), ապա Աստված, հայրաբար հոգատար լինելով մարդկանց նկատմամբ, պետք է այնպես անի, որ մահացածները ժամանակ առ ժամանակ (ցանկալի է անգամ հաճախ) վերադառնան երկիր՝ հավաստիացնելու հանդերձյալ կյանքի գոյությունը: Այդ դեպքում ոչ ոք կասկած չի ունենա կյանքի հավերժ շարունակելիության վերաբերյալ[9]: Այս է սպիրիտիզմի ջատագովի տեսակետը:

Նրանք այսօր էլ շարունակում են այդ տրամաբանական շղթան:

Նման վառ եւ շոշափելի ապացույց է անհրաժեշտ հատկապես մեր օրերի մարդկանց, քանզի նրանց հավատքը թուլացել է, անգամ կորել: Իսկ դրա հաստատման համար արդեն բավական չեն Մովսեսն ու մարգարեները, Ավետարանն ու առաքյալները: Մեզ անհրաժեշտ են արտասովոր նշաններ եւ բացահայտումներ. եթե մենք տեսնենք, զգանք եւ շոշափենք հանդերձյալ հոգուն, նրա ցույց տված նշաններով, ապա այդ ժամանակ անմիջապես կհավատանք: Այդպես է խորհում առակի մեծահարուստը, նույն կարծիքին են նաեւ ժամանակակից սպիրիտիստները: Վերջիններիս հաջողվում է շատ լավ եւ առանց խոչընդոտի հասնել նպատակին: Իրենց ցանկությամբ, իրենց կանչով ի հայտ են գալիս հանդերձյալ կյանքի ներկայացուցիչները՝ բերելով իրենց հետ մեզ հետաքրքրող հարցերի պատասխանները»:

Այսպիսով՝ սպիրիտիստները, քարոզելով միայն հոգու անմահությունն ու նրա հետ կապի եւ շփման մեջ մտնելու անհրաժեշտությունը, կամենում են իբր ավետարանական ճշմարտությունները փաստել եւ հաստատել: Մի պահ ենթադրենք, որ հնարավոր է անմիջական շփումը մահացած հոգիների հետ եւ նրանց միջոցով գիտելիքներ ու փաստեր ձեռք բերելը: Ի՞նչ կստացվի: Միայն քառս ու ոչ ավելին: Բայց սպիրիտիզմի գոյությունն ու կենսունակությունը մինչեւ այսօր ստիպում են մեզ քննելու սպիրիտիզմի սկզբունքներն ու պատասխանել առաջադրված հարցադրումներին: Իսկ կրոնների պատմությունից մենք գիտենք շատ օրինակներ, երբ շարժման ծնունդ համարվող այս կամ այն սկզբունքը, մարգարեությունը, կանխատեսումը չի իրականացել, հիմնադիր առաջնորդները մահացել-գնացել են, բայց շարժումը շարունակել է գոյատեւել:

***

Չնայած առակում Աբրահամի պատասխանը վերջնական է եւ համոզիչ, եւ սպիրիտիստները հենց այդ առակն են մեջբերում, սակայն հենց դրանով էլ իրենց դավանանքի հիմքը խախտվում է: Մարդկությանը տրված Աստվածային մեծագույն հայտնությունը՝ Աստծու խոսքը մեր լուսավոր ուղեցույցն է: Դա լավագույնն է մարդկության փրկության համար: Եւ եթե մարդը այնքան է բարոյալքվել, որ չի լսում Աստծու ձայնը, չի ընդունում ավետարանական ճշմարտությունները, չի ղեկավարվում անգամ իր սեփական խղճի ձայնով, ապա նա ընդունակ չի լինի հավատալու ոչ մի փաստարկի, ինչպիսին էլ այն լինի:

Իրականում այդ հայտնությունները ոչ միայն չեն բավարարի մարդկային հետաքրքրասիրությունը, այլեւ ավելին, հակառակը կստացվի: Չկրկնենք ավետարանական ժամա-

9 **Тихомиров**, նշված աշխատ., էջ 102-103:

նակներում նման մոտեցում պահանջող հրեաներին. «Թեպետ եւ նա այնքան նշաններ էր արել նրանց առաջ, նրանք չէին հավատում նրան» (Յովհ. ԺԲ, 37) : Կամ կորնթացիներին, որ ստիպեցին Պողոս առաքյալին արտահայտվել այդպես կտրուկ. «Իսկ որովհետեւ հրեաները նշան են հայցում, եւ հեթանոսներն իմաստություն են փնտրում, մենք քարոզում ենք խաչված Քրիստոսին՝ ի գայթակղություն հրեաների եւ ի հիմարություն հեթանոսների»(Ա Կորնթ. Ա 22-23):

Եթե անգամ ենթադրենք, որ Աստված բավարարեր որոշ մարդկանց ցանկությունը (օրինակ՝ առակի հարուստի ցանկությունը) եւ կենդանացներ մահացած մարդուն, որոնք հետո այցելեին իրենց ծանոթներին, ինչ կստացվեր: Շատերը չէին հավատա նրանց վկայություններին, կհամարեին երեւակայության արդյունք կամ ինչ-ինչ բացատրություններ կտային նրանց մահվան փաստին եւ հարության պարագային: Եւ նման դեպքում այդ տեսիլք-այցելությունները ծաղրի կենթարկվեին, ու կստացվեր միանգամայն հակառակ արդյունքը:

Իսկ եթե մեռած մարդիկ կենդանանան հաճախակի եւ կամ այցելեն ում կամենան, ապա դա կդառնա սովորական մի երեւույթ, որը տպավորություն չի թողնի մարդկանց վրա, մարդիկ երեւույթի նկատմամբ կդառնան անտարբեր: Եվ կստացվի այնպես, ինչպես մարգարեանում էր Եսային. «... Պիտի լսեք, պիտի լսեք ու պիտի չիմանաք, պիտի նայեք, պիտի նայեք ու պիտի չտեսնեք»(Եսայի Զ, 9, Մատթ. ԺԳ, 14):

Հետեւաբար քրիստոնեական տեսանկյունից՝ սպիրիտիզմը մերժելի երեւույթ է, եւ սուրբգրային վարդապետության շրջանակներում չենք կարող տեղավորել մահացած մարդկանց հոգիների հետ շփման մեջ մտնելու երեւույթը: Բայց երեւույթը գոյություն ունի եւ, բնականաբար պետք է բացատրություն տրվի: Հնարավոր է երկու պատասխան.

ա. դա պատրանք է եւ մեդիումի հնարամտության կամ ինչ-ինչ «շնորհի» դրսեւորում (աճպարարություն)

բ. դա իրոք ինչ - որ ոգիների հետ հաղորդակցության դրսեւորում է:

Առաջին դեպքի վերաբերյալ ժամանակին Մենդելեեւի հանձնախմբի որոշումը հիմնավոր է եւ վերջնական եւ կարելի է ասել, որ սպիրիտ-սեանսների մեծ մասը, մեր կարծիքով, այս դասին կարելի է վերագրել: Այս դասի գոյությունն անշուշտ չի բացառում նաեւ երկրորդ դասին վերագրվող սպիրիտ-սեանսների գոյությունը: Ընդհանուր առմամբ այս երկու դասերը, հավանաբար, միշտ էլ գոյություն են ունեցել միասին: Հետեւաբար, մնում է միակ ենթադրվող պատասխանը. երկրորդ դասի մեջ չենք կարող ժխտել որոշ անտեսանելի զորությունների առկայություն, որն էլ, համաձայն քրիստոնեական հրեշտակաբանության, կարող է հանդիսանալ հրեշտակների անկյալ դասը[10]: Այսինքն՝ այս կարգի «կոնտակտները» հենց անկյալ հրեշտակների դասի ներկայացուցիչների հետ են կատարվում: Այդ տեսակետն է պաշտպանում նաեւ Տաթեւացին[11], ինչպես նաեւ քրիստոնեական այլ եկեղեցիներ[12]:

Քանի որ Ռուսաստանում երեւույթը շատ է տարածված, Ռուս ուղղափառ եկեղեցու դիրքորոշումն այդ երեւույթի վերաբերյալ խիստ է եւ կտրուկ. այն որակվում է որպես բացահայտ կապ դիվական զորությունների եւ դիվական աշխարհի հետ:

---

10 **Ա. Տէր-Միքէլեան**, Հայաստանեայց Սուրբ Եկեղեցու քրիստոնէականը, Տփղիս, 1900, էջ 115-121:

11 «Գիրք հարցմանց», էջ 428-429:

12 "Религия, история и современность", под редакцией проф. Мунчаевам М, 1998, էջ 192-195. **M. Walter**, The kingdom of cults, էջ 345-346, **Священник Родион**, Люди и демоны, Дивеево, 1991, էջ 131-139):

***

Նշենք նաեւ, որ մահացածների հոգիները հանդերձյալ աշխարհում, ինչպես առակն է պատմում, իմանում են ավելի շատ գաղտնիքներ, բայց ոչ մի կերպ չեն կարող այդ «իմացությունը» փոխանցել երկիր՝ ողջերին: Պողոս առաքյալի փորձառությունն այստեղ ունի սկզբունքային նշանակություն. «Եւ գիտեմ այդպիսի մարդու (թե մարմնով էր կամ առանց մարմնի՝ չգիտեմ, Աստվա՛ծ գիտե), որ հափշտակվեց մինչեւ դրախտ եւ լսեց անպատում խոսքեր, որ մարդուս արտոնված չէ խոսել» (Բ Կորնթ. ԺԲ 3-4): Այսինքն՝ մահացածների եւ կենդանի մարդկանց միջեւ առկա է հսկայական անդունդ, որը ոչ ոք չի կարող հաղթահարել, ինչպես եւ առակն է պատմում:

3. ԱՅԵՆԴՈՐՅԱՆ ՎՀՈՒԿԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ

Որպես ապացույց այն հանգամանքի, թե մահացած մարդկանց հոգիների հետ կարելի է շփման մեջ գտնվել կամ ինչ-որ կապ հաստատել՝ սպիրիտիստները բերում են Այենդորյան վհուկի պատմությունը, ինչպես ասվեց վերեւում: Անդրադառնանք այդ պատմությանն ավելի մանրամասնորեն:

«Սավուղն ասաց իր ծառաներին. «Մի ոգեհարց կին գտե՛ք, որ գնամ նրա մոտ ու հարց տամ նրան»: Ծառաներն ասացին նրան. «Ահա մի ոգեհարց կին կա Այենդորում»: Սավուղը ծպտվեց, ուրիշ զգեստներ հագավ ու գնաց երկու մարդկանց հետ: Նրանք գիշերը հասան կնոջ մոտ: Սավուղն ասաց նրան. «Ոգեհարցին պատշաճ դյութություն արա՛ եւ կանչի՛ր նրան, ում որ քեզ կասեմ»: Կինն ասաց. «Դու ինքդ գիտես, թե ինչ էր արել Սավուղը, թե ինչպես ոգեհարցներին ու գուշակներին վերացրեց երկրից: Արդ, ինչո՞ւ ես ինձ սպանելու համար իմ անձի դեմ որոգայթ լարում»: Սավուղը նրան Տիրոջ անունով երդվեց՝ ասելով. «Կենդանի է Տերը. այս բանից քեզ ոչ մի վնաս չի հասնի»: Կինն ասաց. «Ո՞ւմ ոգին կանչեմ»: Նա ասաց. «Սամուելի ոգին կանչի՛ր»:

Կինը, տեսնելով Սամուելին, բարձր ձայնով աղաղակեց ու ասաց Սավուղին. «Ինչո՞ւ ինձ խաբեցիր, չէ՞ որ դու հենց Սավուղն ես»: Արքան նրան ասաց. «Մի՛ վախեցիր, ասա՛, ո՞ւմ տեսար»: Կինն ասաց նրան. «Գետնից դուրս եկող աստվածներ եմ տեսնում»: Սավուղն ասաց նրան. «Ի՞նչ նկատեցիր»: Նա ասաց. «Մի կանգնած մարդ երկրից ելնում էր, եւ նրա վրա թիկնոց կար»: Սավուղն իմացավ, որ դա Սամուելն է, եւ երեսնիվայր ընկավ գետին ու երկրպագեց նրան: Սամուելն ասաց Սավուղին. «Ինչո՞ւ ինձ կանչելով նեղություն տվեցիր ինձ»: Սավուղն ասաց. «Սաստիկ նեղ վիճակում եմ, այլազգիներն իմ դեմ պատերազմի են ելել, Աստված ինձնից հեռացել է, ինձ չի պատասխանում ո՛չ մարգարեների, ո՛չ էլ երազների միջոցով: Արդ, քեզ կանչեցի, որ ինձ ցույց տաս, թե ինչ անեմ»: Սամուելն ասաց. «Ինչո՞ւ ես ինձ հարցնում: Տերը քեզ հետ վարվեց այնպես, ինչպես իմ միջոցով հայտնել էր: Տերը քո ձեռքից խլելու է թագավորությունդ եւ տալու է քո ընկերոջը՝ Դավթին, որովհետեւ չլսեցիր Տիրոջ ձայնը եւ նրա սաստիկ բարկությունն Ամաղեկի վրա ի գործ չդրեցիր...» (Ա Թագ. ԻԸ, 7-25):

Առաջին վարկածը[13]

Սա ոչ թե բնական հայտնություն է, այլ հրաշք՝ Աստծու գործ: Եթե մեռած հոգիների գալուստն անդրաշխարհից սովորական բան լիներ եւ բնական երեւույթ, ապա Աստված կդատապարտեր եւ կարգելեր միայն այն հոգիներին, որոնք հետապնդում են չար մտքեր ու գործեր: Անմիտ հարուստի պարագայում (Ղուկ.ԺԲ, 13-21) չի դատապարտվում արարքը, այսինքն՝ բերքն ամբարներում հավաքելը, այլ այն իր անձի համար օգտագործելը ու ոչ թե «Աստուծով հարստանալը»:

Սպիրիտ-սեանսների պարագան այլ է. Աստված արգելում է ոչ միայն հոգիներ կամ ոգիներ կանչելը, այլ նաեւ բոլոր տեսակի կախարդանքներով եւ գուշակություններով զբաղվելը: Ենգամատյանը բացահայտ կերպով ասում է. «Քո կողքին թող չգտնվի այնպիսի մեկը, որ մոգություններով զբաղվի, վհուկ կամ սուտ մարգարե լինի, ոգեհարցությամբ զբաղվի, որովհետեւ Տիրոջ համար պիղծ է նա, ով զբաղվում է այդպիսի բաներով» (Բ Օրենք ԺԸ, 11-12):

Իսկ Եսային ասում է. «Եվ եթե ձեզ ասեն, թե՝ «Հարցրե՛ք վհուկներին ու մեռելահարցուկներին, նանրախոսներին ու որովայնախոսներին», այն ժամանակ ասացե՛ք. «Մի՞թե որեւէ ժողովուրդ իր Աստծուն չպիտի դիմի, ողջերի համար մեռածների՞ն պիտի հարցնեն: Չէ՞ որ օրենքը տվեց օգնության համար, որպեսզի ասեն, թե սրանք այն խոսքերը չեն, որոնց համար պետք է կաշառք տալ» (Եսայի Ը, 19-20):

Այսպիսով՝ եթե վհուկի կանչով Սամուելի գալուստը չէր կարող բնական երեւույթ լինել, այդ դեպքում ինչպես բացատրել այդ երեւույթը: Մի՞թե դա խաբեություն էր կամ հիվանդ, խանգարված հոգիվիճակի հետեւանք, մասսայական հիպնոտիզմի երեւույթ:

Թագավորաց գրքի պատմությունից կարելի է եզրակացնել.

1) Սավուղը եկավ վհուկի մոտ զգեստափոխված, բայց վերջինս նրան չճանաչեց եւ միայն Սամուելի հայտնվելուց հետո ճանաչեց:

2) Սամուելին տեսնելիս վհուկը վախեցավ եւ բղավեց, եւ երբ Սավուղը նրան հանգըստացրեց, վհուկն ասաց. «Գետնից դուրս եկող ապտվածներ եմ տեսնում», իսկ Սավուղը, ճանաչելով Սամուելին, խոսեց նրա հետ:

3) Սամուելը բարկացավ Սավուղի վրա՝ ասելով. «Ինչո՞ւ ես ինձ հարցնում: Տերը քեզ հետ վարվեց այնպես, ինչպես իմ միջոցով հայտնել էր: Տերը քո ձեռքից խլելու է թագավորությունդ եւ տալու է Դավթին, որովհետեւ չլսեցիր Տիրոջ ձայնը եւ նրա սաստիկ բարկությունը Ամաղեկի վրա ի գործ չդրեցիր: Այդ պատճառով էլ Տերն այսօր քեզ հետ այդպես է վարվում: Տերն Իսրայելին քեզ հետ միասին մատնելու է այլազգիների ձեռքը, վաղը դու եւ քո որդիները պիտի ընկնեք, եւ Տերն Իսրայելի բանակը պիտի մատնի այլազգիների ձեռքը» (Ա Թագ. ԻԸ, 16-19):

4) Վերջապես, վախեցած Սամուելի ասածից, Սավուղը երեսնիվայր ընկնում է գետնին: Իսկ դա նշանակում է, որ այդ ընթացքում Սավուղը միանգամայն գիտակից վիճակում էր, ոչ

13 **Տաթեւացի**, Գիրք հարցմանց, էջ 429-430, **Тихомиров**, էջ 100-121:

թե ինչ-որ արտասովոր կամ էքստատիկ, ինչպես նման սպիրիտ-սեանսների մասնակիցները:

Եթե ընդունենք, որ Սամուելի հայտնությունն իրականություն էր, ոչ թե Սավուղի հիվանդագին հոգեվիճակի հետեւանք, ապա ո՞վ էր արտասովոր երեւույթի հեղինակը՝ արդյո՞ք սատանան: Այդպես են մեկնում այս դրվագը եկեղեցու շատ հայրեր[14]: Նրանք պնդում են, թե սրի, չարի եւ խավարի ոգին էր խոսում Սամուելի անունից, եւ որ այդ չար ոգին կարող է երեւալ լույսի ու բարու հրեշտակի կերպարանքով:

Այս պարագայում անպատասխան են մնում հետեւյալ հարցերը. Սամուելը մեղադրում է Սավուղին, նախատում, որ նա հրաժարվել էր Աստծուց: Նրա բոլոր ասածները կատարվեցին. Աստծու դատը եւ կամքն ի կատար ածվեցին: Իսկ այդ բոլորովին բնորոշ չէ չար ոգուն:

Երկրորդ վարկածը

Սամուելի հայտնությունն արտասովոր, Աստծու կողմից կատարված հրաշք էր, որով Աստված մի անգամ եւս ցույց տվեց Իր խոսքի կատարվելու վավերականությունը անգամ վհուկի միջոցով[15]:

Առաջին վարկածի դեմ բերվում է հետեւյալ փաստարկը.

1) Անհնար է, որ Աստված իր հայտնությունը կատարեր հեթանոս վհուկի միջնորդությամբ, որով եւ կհաստատեր Սավուղի ընտրած ճանապարհի ճիշտ լինելը:

Այստեղ Աստված կարող էր օգտագործել վհուկին՝ Իր մարգարեական խոսքը հայտնելու համար, ինչպես Կայիափա քահանայապետը մարգարեացավ Հիսուսի մահվան վերաբերյալ եւ դրանով իսկ հայտնեց Աստծու կամքը. «Ավելի լավ է, որ ժողովրդի համար մեկ մարդ մեռնի» (Հովհ. ԺԸ 14):

Հետեւաբար չի բացառվում նաեւ այենդորյան վհուկի միջոցով մարգարեության հայտնությունը:

Բոլորովին էլ մերժելի չէ, որ Սամուելի հայտնությունն աստվածային հրաշք լինի: Նույն պարագան է նաեւ Բաղաամի դեպքը, երբ նրա բերանից անեծքի փոխարեն մարգարեական խոսք հնչեց (Թ-իք, ԻԴ):

Ինչպես տեսնում ենք, երկու վարկածի դեպքում էլ սպիրիտիստների օգտին չէ սուրբգրային հեղինակությունը, ավելին՝ նրանց ուսմունքին դեմ է: Այստեղ կարեւոր է նաեւ մեկ ուրիշ փաստ: Եթե հնարավոր լիներ շփումը մահացածների հոգիների հետ, ապա որքանո՞վ դա արդարացված կլիներ եւ ի՞նչ լավ սպասելիքներ կունենայինք: Միգուցե հակառակն ավելի օգտակա՞ր կլիներ մեզ համար, եւ Աստված մահացածների շուրթերը փակել է հավերժական լռությամբ եւ անտեսանելի վարագույրով փակել հավերժության դարպասները:

Թվում է, թե մեծ օգուտ կլիներ մարդկությանը՝ անդրաշխարհի հետ շփում ունենալու հնարավորության պարագային, բայց իրականում հակառակ արդյունքն ավելի դրամաբա-

14 Հուստինոս Վկան, Որոգինեսը, Օգոստինոսը, Տերտուղիանոսը, Հերոնիմոսն, անգամ Լյութերն ու Կալվինը (Տե՛ս The new bible commentary, by Davidson, London, 1967, էջ 278, The Wycliffe Bible Commentary, M.P., Chicago, 1996, էջ 291-292:

15 Толковая Библия, հ. Ա, էջ 293-294:

նական է: Բարոյական որեւէ օգուտ հանդերձյալ աշխարհի հետ շփումից ակնկալելն անիմաստ է, քանի որ ամենուրեք քառս կտիրեր, կխախտվեր մեր կյանքի օրինավոր ընթացքը, անհասկանալի հունով կընթանային մեր մտքերը եւ ցանկությունները: Ձեռնարկելով մի գործ՝ անպայման պիտի հաշվի առնենք այն աշխարհի խորհրդատուի կարծիքը: Բայց ի՞նչ երաշխիք, թե մեռած մարդկանց հոգիները ճիշտ խորհուրդներ կհայտնեն:

Երբ մարդը զրկվում է մարմնից, նա կորցնում է բոլոր միջոցներն այս աշխարհի հետ հաղորդակցվելու համար եւ հակառակը, մարմնի մեջ մարդը հնարավորություն չունի թափանցելու հոգիների աշխարհը, անդրաշխարհը: Մահացածներին շարունակում են հիշել, սիրել, աղոթել, ինչին եւ կոչ է անում Եկեղեցին, բայց ոչ շփվել ու հաղորդակցվել, որն արգելում է Սուրբ Գիրքը:

Այսպիսով՝ միանշանակ կարելի է պնդել, որ սպիրիտ-սեանսների ժամանակ մեդիումներն անկյալ հրեշտակների դասի ներկայացուցիչների հետ են «կոնտակտի» մեջ մտնում: Մնացած բոլոր դեպքերում այդ ամենը պատրանք է, խաբեություն՝ մեդիումի անպարարություն կամ ինչ-ինչ հնարամտություն: